ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» «ապրիլի» 2024 թ. № 131-Ա

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «թ4)» կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝
   1) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հայտի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,
   2) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 10-ից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

4/22/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«22» ապրիլի 2024 թ.
ք. Երևան

Հավելված N 1

Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի մարտի «22» -ի
N 131 - Ն հրամանի
Օրինակելի ձև

ՀԱՅՏ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

(Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իսկ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը)

օգտագործման ենթակա տարածքը (մարզը, համայնքը)

օգտագործման նպատակը

որսամիջոցները

օգտագործման ժամանակահատվածը

ձկնորսության դեպքում՝ ----------

---ձկնորսով (ձկնորսներով)

(անձնագրի տվյալները)

---------- լողամիջոցներով,

N	Կենդանական աշխարհի օբյեկտի անվանումը (տեսակը)	Քանակը (հատ, կգ)

Հայտատու՝ _____

(իրավաբանական անձի անվանում / անուն, ազգանուն, ստորագրություն)

Հայտը ներկայացնելու ամսաթիվը «----» ---------- 202 թ.

Հավելված N 2

Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի ապրիլի «22» -ի
N 131 - Ն հրամանի
Օրինակելի ձև

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ք.Երևան «_____»_____202 թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը՝ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման իրավունք տրամադրողը (այսուհետ՝ լիազորված մարմին), ի դեմս՝ ----------

----------մի կողմից,

(անուն, ազգանուն, պաշտոն)՝

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները և բնակության վայրը, իսկ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը)

(այսուհետ՝ կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործող) ի դեմս՝

(անուն, ազգանուն)

և մյուս կողմից կնքեցին (այսուհետ միասին՝ կողմեր) սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Լիազորված մարմինը սույն պայմանագրով կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին իրավունք է վերապահում

---------- տարածքում

(օգտագործման ենթակա տարածքի տեղադիրքը)

---------- նպատակով,

---------- որսամիջոցով,

(տեսակը, նկարագիրը, քանակը)

ձկնորսության դեպքում ----------

---------- ձկնորսով (ձկնորսներով)

(անձնագրի տվյալները)

---------- լողամիջոցներով,

Կատարել (որս, հայթայթում, հավաք) _____

(կենդանական աշխարհի օբյեկտի տեսակը և քանակը)

_____ թ. մինչև _____ թ. ընկած ժամանակահատվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Լիազորված մարմինն իրավունք ունի.

2.1.1 կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողից պահանջել օգտագործել սույն պայմանագրով սահմանված քանակին և տեսակին համապատասխան կենդանական աշխարհի օբյեկտներ,

2.1.2 պահանջել սույն պայմանագրի կնքման համար «Պետական տուրքի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրեսգրքով սահմանված վճարումները հավաստող փաստաթղթերը՝ (բացառությամբ գիտահետազոտական և կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման) մինչև պայմանագրի կնքման գործընթացը սկսելը:

2.2. Լիազորված մարմինը պարտավոր է.

2.2.1 կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին տրամադրել կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության վերաբերյալ տեղեկատվություն:

2.3. Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողն իրավունք ունի.

2.3.1 լիազորված մարմնի հետ համաձայնեցնելուց հետո իրականացնել կենդանական աշխարհի օբյեկտների բարելավման միջոցառումներ,

2.3.2 պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

2.3.3 իրացնել կենդանական աշխարհի օգտագործումից ստացված արտադրանքը և տնօրինել եկամուտները, բացառությամբ գիտահետազոտական և կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման դեպքում,

2.3.4 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ գործունեություն:

2.4 Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը պարտավոր է.

2.4.1 գործել Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով,

2.4.2 կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործել բացառապես սույն պայմանագրի պայմաններին և նպատակին համապատասխան,

2.4.3 ապահովել պայմանագրով իրեն հատկացված կենդանական աշխարհի օբյեկտների պահպանությունը,

2.4.4 չխախտել կենդանական համակեցությունների ամբողջականությունը,

2.4.5 կատարել պայմանագրային պարտականությունները,

2.4.6 իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ կենդանական աշխարհի օբյեկտների վերարտադրության և պաշտպանության նպատակով,

2.4.7 աջակցել պետական մարմինների գործունեությանը՝ կենդանական աշխարհի օբյեկտների հսկողության, պետական հաշվառման և մոնիտորինգի իրականացման համար,

2.4.8 չխախտել կենդանական աշխարհի օբյեկտների այլ օգտագործողների իրավունքները,

2.4.9 հատուցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով հատուցել բնությանը պատճառած վնասները,

2.4.10 պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ լիազորված մարմնին պատշաճ կերպով գրավոր տեղեկացնել դրա մասին,

2.4.11 սույն պայմանագրի գործողությունն ավարտվելուց հետո մեկամսյա ժամկետում լիազորված մարմնին ներկայացնել հաշվետվություն՝ կենդանական աշխարհի օբյեկտների որսված քանակության և տեսակների վերաբերյալ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1 Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը «Պետական տուրքի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով վճարում է պետական տուրք _____ դրամ և բնօգտագործման վճար _____ դրամ:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում ծագած վեճերը լուծվում են դատական կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, ինչը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և այն ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1 Պայմանագիրը դադարում է դրանով սահմանված ժամկետը լրանալու կամ պայմանագրով սահմանված չափաքանակները սպառվելու դեպքում:

6.2 Լիազորված մարմնի կողմից սույն պայմանագիրը կարող է միակողմանի և վաղաժամկետ լուծվել, եթե կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը.

6.2.1 կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործել է օրենքի, իրավական այլ ակտերի և սույն պայմանագրի պայմանների կամ կենդանական աշխարհի օբյեկտների տրամադրման նպատակի խախտումներով,

6.2.2 լրիվ կամ մասնակիորեն հրաժարվում է իր պայմանագրային պարտավորությունների կատարումից,

6.2.3 կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման ենթակա տարածքը վերցվում է պետական կամ հասարակական կարիքների համար

6.2.4 խախտել է սույն պայմանագրի 2.4.1-2.4.11-րդ կետերով սահմանված պարտականություններից որևէ մեկը:

6.3 Վերոնշյալ հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազորված մարմինը որևէ պատասխանատվություն չի կրում:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

8. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Պայմանագրի դրույթների փոփոխումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ: Կատարվելիք փոփոխությունները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում: Դրանք ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրով, ինչը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Պայմանագրի ժամկետը սահմանվում է «____» _____ թ. մինչև «____» _____թ.:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենդանական աշխարհի օբյեկտներ
օգտագործող

_____

_____

(բանկային վավերապայմանները)

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Լիազորված մարմին

_____

_____

(բանկային վավերապայմանները)

_____

(ստորագրություն)

Կ.Տ